Անուն Ազգանուն:
Հեռ. Էլ. Փոստ, կայք

**Շուշան Դոյդոյան**
091407836; sh.doydoyan@icloud.com;
www.foi.am; www.ogp.am;
www.givemeinfo.am; www.idcarmenia.am

# Շուշան Մուկուչի Դոյդոյան

## Ինքնակենսագրություն

Բանասիրական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի դոցենտ և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր նախագահ:

Շուշան Դոյդոյանը 2001թ.-ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր-նախագահն է՝ www.foi.am: Շ. Դոյդոյանը տեղեկատվության ազատության իրավունքի ջատագովներից է, ով նախաձեռնել եւ նպաստել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունմանը (2003թ.):

Տկն. Դոյդոյանն առաջին կինն է, ով 2015 թվականի Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխությանն արժանացել է ***Ազատության պաշտպան*** մրցանակին: Համընդհանուր իրավունքների մրցանակաբաշխության ընթացքում Հայաստանում գործող միջազգային կառույցները իրենց գնահատանքն են հայտնում այն անձանց, ովքեր հանդես են գալիս Հայաստանում մարդու իրավունքների, հաշվետու կառավարման, տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումների ու ազատ խոսքի խթանման դիրքերից:

Շուշան Դոյդոյանը Երևանի պետական համալսարանի դոցենտ է: 1997թ.ին գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետը, իսկ 2004թ.ին՝ իրավաբանության ֆակուլտետը: ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում արդեն 18 տարի դասավանդում է «Լրագրողական էթիկա», «ԶԼՄ օրենսդրություն» «ԶԼՄ կարգավորում եւ ինքնակարգավորում» հեղինակային առարկաները: Տկն. Դոյդոյանը բանասիրական գիտությունների թեկնածու է 2001թ.ից: Մասնագիտացել եւ Վերապատրաստվել է ԱՄՆ-ում, Կենտրոնական Եվրոպայի համալսարանում (Բուդապեշտ) եւ Մոսկվայի պետական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում:

2003թ.ից մինչ օրս «Լրագրողներ առանց սահմանների» միջազգային կազմակերպության ներկայացուցիչն է Հայաստանում www.rsf.org: 2004-2006 եւ 2010-2014թ.թ.-ին Շուշան Դոյդոյանը Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի ղեկավար կոմիտեի անդամ է՝ www.foiadvocates.net: Նա նաեւ Եվրոպայի տեղեկատվության մատչելիության կազմակերպության հիմնադիր անդամ է www.access-info.org:

Տկն. Դոյդոյանն իրականացրել է փորձագիտական աշխատանք եւ տասնյակ ուսուցումներ ԵԱՀԿ-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Գերմանիայի զարգարգացման գործակալության համար եւ աջակցությամբ ՏԱ եւ Բաց կառավարման գործընկերության ոլորտներում:

2011թ.ից Տեղեկատվական վեճերի խորհրդի քարտուղարն է www.idcarmenia.am, որը ԶԼՄ վեճերի լուծման արտադատական մարմին է (անձնական կյանքի գաղտնիություն, զրպարտություն վիրավորանք, ատելության խոսք եւ այլ հարցերի շուրջ): Որպես լրագրող 1996-2003թ.թ. աշխատել է Հայաստանի հանրային ռադիոյում, Հետաքննող լրագրողների ընկերակցությունում եւ Ինտերնյուսում:

Որպես ԻԱԿ նախագահ նրա ներկայիս աշխատանքը ներառում է տեղեկատվության ազատության, անձնական կյանքի գաղտնիության իրավունքի եւ հարակից իրավունքների ոլորտում հանրային քարոզարշավների, ռազմավարական դատավարությունների նախաձեռնում եւ համակարգում, հանրային ծառայողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ուսուցումների իրականացում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման մոնիտորինգ, հասարակական լայնամասշտաբ ծրագրերի համակարգում մարդու իրավունքների, կառավարման թափանցիկության եւ հրապարակայնության, քաղաքացիական մասնակցության եւ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

Շուշան Դոյդոյանը 60-ից ավել գիտական հոդվածների հեղինակ է, երկու տասնյակ գրքերի, մենագրությունների եւ դասագրքերի հեղինակ:

**2001թ. հուլիս մինչ օրս**
***Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ*** www.foi.am
Հիմնադիր եւ նախագահ

**2003թ. ապրիլ մինչ օրս**
**Լրագրողներ առանց սահմանների միջազգային կազմակերպություն** www.rsf.org
Հայաստանյան ներկայացուցիչ

**1997թ. մինչ օրս**
**Երեւանի պետական համալսարան, ժուռնալիստիկայի ֆակուլտետ**
Դոցենտ, դասախոս
Ժուռնալիստական էթիկա՝ 1-ին կուրս
ԶԼՄ եւ օրենսդրություն՝ բակալավրատ, 3-րդ կուրս
ԶԼՄ կարգավորում եւ ինքնակարգավորում՝ մագիստրատուրա, 1-ին կուրս

**2000-2004թ.թ.**
**Հետաքննող լրագրողների ընկերակցություն ՀԿ**
Ծրագրի համակարգող

**1998-2001թ.թ.**
**Ինտերնյուս Հայաստան**
Լրագրող

**1996-1998թ.թ.**
***Հայաստանի հանրային ռադիո***
«Իրավունք» ռադիոհաղորդման լրագրող, խմբագիր

| | |
|---|---|
| 2001թ. հուլիս | Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական կոչում<br>Երեւանի պետական համալսարան<br>Գիտական թեզ «Խոսքի ազատությունը որպես սահմանադրական իրավունք» |
| 2000 նոյեմբ- դեկտ. | Վերապատրաստման դասընթաց "ԶԼՄ ուսումնասիրություններ" թեմայով, Curriculum Resource Centre,<br>Կենտրոնական եվրոպական համալսարան, Բուդապեշտ, Հունգարիա |
| 2000 – 2004թ.թ. | Երեւանի պետական համալսարան<br>Իրավաբանության ֆակուլտետ |
| 1999թ. սեպտ. –հոկտ. | ԶԼՄ օրենսդրություն եւ էթիկա վերապատրաստման դասընթաց լրագրողների համար, Վաշինգտոն, Նյու յորք, Հյուսթոն, ԱՄՆ |
| 1999թ. մայիս-հունիս | Մոսկվայի պետական համալսարան, ժուռնալիստիկայի ֆակուլտետ<br>Վերապատրաստման դասընթաց դասախոսների համար |
| 1999թ. մարտ | Հաղորդակցական ուսումնասիրություններ, Կենտրոնական եվրոպայի համասլարան, Բուդապեշտ, Հունգարիա |

| | |
|---|---|
| 1996 մայիս-հուլիս | Հայաստանի ամերիկյան համալսարան<br>Վերապատրաստման դասընթաց լրագրողների համար |
| 1992-1997թ.թ. | Երեւանի պետական համալսարան<br>Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, գերազանցության վկայական |
| 1992թ.թ. | Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, միջնակարգ կրթության գերազանցության վկայական |

## [illegible]

| | |
|---|---|
| 2011թ. մինչ օրս | Տեղեկատվական վեճերի խորհրդի քարտուղար<br>ՏՎԽ-ն ԶԼՄ վեճերի լուծման արտադատական մարմին է, որը անձնական կյանքի գաղտնիություն, զրպարտություն վիրավորանք, ատելության խոսք եւ այլ հարցերի շուրջ հրապարակում է մասնագիտական կարծիք www.idcarmenia.am |
| 2015թ. հուլիս<br>2014թ. դեկտեմբեր, | Տեղեկատվության ազատության ուսուցանող լրագրողների համար<br>Գերմանիայի զարգացման գործակալություն GIZ |
| 2014թ. մարտ- ապրիլ | Ազգային խորհրդատու ԲԿԳ 2-րդ ազգային ծրագրի մշակման ոլորտում, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր UNDP |
| 2005-2013թ.թ. | Իրականացրել է ՏԱ եւ հակակոռուպցիոն ուսուցումներ 5000ից ավելի քաղաքացիական ծառայողների համար ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված «ՏԱ որպես համայնքային մասնակցությամբ միջոց 8 ամյա ծրագրի շրջանակում |
| Մայիս 2011թ. | ԶԼՄ ուսուցանող, ԶԼՄ-ի Կովկասյան ինստիտուտ, Caucasus Media Institute |

| | |
|---|---|
| Ապրիլ, 2011թ. | Փորձագետ ուսուցանող ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի համար ՀՀ Պաշտպանության նախարարության 20 աշխատակիցների ուսուցման իրականացում ՏԱ ոլորտում |
| 2009 – 2010թ.թ. | Մենթոր ԱՄՆ դեսպանության եւ Հայաստանի ամերիկյան համալսարանի Մենթորային ծրագրի շրջանակում |
| 2008 – 2009թ.թ. | ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի փորձագիտական խմբի փորձագետ |
| 2008թ. մայիս | Փորձագետ ուսուցանող ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի համար<br>ՏԱ ուսուցումների անցկացում պետական կառավարման համակարգի 84 քաղաքացիական ծառայողների համար |
| 2008 մարտ | Փորձագետ ուսուցանող IREX-ի համար Քաղ. հասարակության առաջնորդների ուսուցման անցկացում |
| 2007 հուլիս-հոկտեմբեր | Փորձագետ ուսուցանող Եվրասիա համագործակցության հիմնադրամի համար, ՏԱ-ն որպես գործիք կոռուպցիայի դեմ պայքարում թեմայով ուսուցումների անցկացում լրագրողների համար |
| 2007 ապրիլ- նոյեմբեր | Փորձագետ հեղինակ ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոսկովյան գրասենյակի համար |
| 2007թ. սեպտեմբեր | Փորձագետ ուսուցանող ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի համար |
| 2004թ. Հունիս | ՏԱ ուսուցումների անցկացում ՀՀ Ազգային ժողովի անձնակազմի համար |
| 2004 – 2005թ.թ. | Ակադեմիական կրթաթոշակի ծրագիր Academic Fellowship Project, վերադարձած գիտնական |

| | |
|---|---|
| 2002 – 2005թ.թ. | Խմբագիր *"ԶԼՄ օրենսդրություն եւ պրակտիկա»*, ամսագիր տեղեկատվական իրավունքի ինստիտուտ» Մոսկվա, ՌԴ |
| 2001 -2003թ.թ. | Քաղաքացիական կրթության ծրագիր Civic Education Project<br>Արտերկրում վերապատրաստված դասախոս |
| 2002թ. հունիս- մայիս | Փորձագետ ուսուցանող ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի համար<br>Խոսքի եւ մամուլի ազատության ուսուցումների անցկացում համալսարանների ուսանողների համար |
| 2000թ. հունվար- մայիս | Այցելու դասախոս Ժուռնալիստիկայի ֆակուլտետ Մասսաչուսեթսի համայնքային քոլեջ, ԱՄՆ |

[illegible]

| | |
|---|---|
| 2011թ. մինչ օրս | Հիմնադիր անդամ եւ քարտուղար Տեղեկատվական վեճերի խորհուրդ www.idcarmenia.am |
| 2004-2006, 2010-2014թ.թ. | ՏԱ պաշտպանների միջազգային ցանցի հիմնադիր, ղեկավար մարմնի անդամ www.foiadvocates.net |
| 2006թ. մինչ օրս | Access Info Europe միջազգային կազմակերպության հիմնադիր անդամ www.access_info.org |
| 2004թ. հունվար- դեկտ. | ԵՊՀ-ում գործող 058 մասնագիտական խորհուրդ, գիտքարտուղար |
| 2001թ. հուլիս մինչ օրս | Հիմնադիր նախագահ Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ www.foi.am, www.givemeinfo.am |
| 2000թ. հունիս-2004դեկտ. | Հիմնադիր անդամ հետաքննող լրագրողների ընկերակցություն www.hetq.am |

[redacted]

Շուշան Դոյդոյանը 60-ից ավել գիտական հոդվածների հեղինակ է, մեկ տասնյակ գրքերի, մենագրությունների եւ դասագրքերի հեղինակ: Գիտական հոդվածները հրապարակվել են ինչպես ՀՀ գիտական ամսագրերում, այնպես էլ ԱՄՆ-ում, եվրոպայում, ՌԴ-ում:

***<u>Մենագրություններ եւ դասագրքեր</u>***

1. Տեղեկատվության ազատության մեկնաբանությունների գիրք, համահեղինակ, 70էջ, Երեւան, 2010թ.;
2. Ժողովրդավարության բանալին. Տեղեկատվության ազատություն, Երեւան, 2008թ., 180 էջ
3. Սահմանադրությունը մամուլի ազատության երաշխավոր, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2001թ., 121 էջ;
4. Ինչպես կիրառել ՏԱ օրենսդրությունը, սեղանի գիրք քաղաքացիական ծառայողների համար, Երեւան, 2008թ.;
5. Տեղեկատվության ազատության իրավական կարգավորումը ՀՀ-ում, մենագրություն, Երեւան, 2005թ., 120 էջ:
6. ԶԼՄ եւ օրենսդրություն, ուսումնական ուղեցույց, Երեւան, 250 էջ, 2007թ.;
7. ԶԼՄ եւ օրենսդրություն, դասագիրք, ԵՊՀ, 2005թ., 106 էջ:
8. Ինչպես օգտագործել ՏԱ օրենսդրությունը, ձեռնարկ լրագրողների եւ քաղ. Հասարակության ներկայացուցիչների համար, երեւան, Երեւան, 2005թ.
9. Ինչպես օգտագործել ՏԱ օրենսդրությունը, ձեռնարկ քաղաքացիների համար, Երեւան, 2005թ.

**<u>Լեզուների իմացություն</u>** ազատ տիրապետում է անգլերեն, ռուսերեն, հայերեն լեզուներին

**<u>Ընտանեկան դրությունը</u>** ամուսնացած է, ունի 4 զավակ

**<u>Ծննդյան տվյալներ</u>** 09.11.1975թ.